ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

1950 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 22-ԻՆ ԼԵՅՔ ՍԱՔՍԵՍՈՒՄ (ՆՅՈՒ ՅՈՐՔ) ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ԿՐԹԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԲՆՈՒՅԹԻ ՆՅՈՒԹԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան 8 հունիսի 2009թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Վ. Հովհաննիսյանի, Զ. Ղուկասյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի (զեկուցող),

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «1950 թվականի նոյեմբերի 22-ին Լեյք Սաքսեսում (Նյու Յորք) ստորագրված՝ կրթական, գիտական եւ մշակութային բնույթի նյութերի ներմուծման մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ ՀՀ սահմանադրական դատարան 07.05.2009թ. մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցիչ՝ ՀՀ մշակույթի նախարար Հ. Պողոսյանի

գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Համաձայնագիրը հաստատվել է Միավորված ազգերի կրթության, գիտության եւ մշակույթի հարցերով կազմակերպության (ՅՈՒՆԵՍԿՕ) Գլխավոր խորհրդաժողովի կողմից 1950թ. հունիսի 17-ին՝ Ֆլորենցիայում, եւ բացվել է ստորագրման համար 1950թ. նոյեմբերի 22-ին՝ Լեյք Սաքսեսում (Նյու Յորք):

2. Համաձայնագիրը բաղկացած է հինգ հավելվածից եւ կից արձանագրությունից: Հավելվածները սահմանում են գրքերի, հրատարակությունների, փաստաթղթերի ցանկը, արվեստի գործերի եւ կրթական, գիտական կամ մշակութային բնույթի հավաքածուների առարկաների ցանկը, կրթական, գիտական կամ մշակութային բնույթի տեսալսողական նյութերի ցանկը, գիտական գործիքների եւ սարքավորումների ցանկը, ինչպես նաեւ կույրերի համար նախատեսված առարկաների ցանկը: Համաձայնագրին կից արձանագրությամբ սահմանվում են համաձայնագրին ԱՄՆ-ի մասնակցության կարգը եւ վերապահման տեքստը:

3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետեւյալ պարտավորությունները.

- հավելվածներում թվարկված նյութերի ներմուծման ժամանակ կամ ներմուծման հետ կապված չկիրառել մաքսատուրքեր,
- համաձայնագրով սահմանված առարկաների ներմուծման համար տրամադրել անհրաժեշտ լիցենզիաներ եւ /կամ արտարժույթ,
- քանակական սահմանափակումներ եւ արժույթի նկատմամբ վերահսկողության միջոցներ կիրառելու դեպքում հնարավորության սահմաններում տրամադրել արտարժույթ եւ արտոնագիր, որոնք անհրաժեշտ են հավելվածներում թվարկված նյութերի ներմուծման համար,
- տրամադրել բոլոր հնարավոր միջոցները կրթական, գիտական եւ մշակութային բնույթի այն նյութերի ներմուծման համար, որոնք ներմուծվում են բացառապես իրավասու մարմինների կողմից հաստատված հանրային ցուցահանդեսների համար՝ հետագայում դրանք արտահանելու պայմանով,

- շարունակել համապեղ ջանքերի գործադրումը կրթական, գիտական եւ մշակութային բնույթի նյութերի ազատ տարածմանը բազմակողմանիորեն աջակցելու, ցանկացած սահմանափակում վերացնելու կամ կրճատելու ուղղությամբ, ինչպես նաեւ պարզեցնել այդ նյութերի ներմուծման վարչական ընթացակարգը եւ աջակցել դրանց արագ ու անվտանգ մաքսազերծմանը,
- ՀՀ-ի համար համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո սահմանված ժամկետում ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները համաձայնագրի լիարժեք ու արդյունավետ գործողությունն ապահովելու համար, իսկ նշված ժամկետը լրանալուց հետո մեկ ամսվա ընթացքում ՅՈՒՆԵՍԿՕ-ին ներկայացնել զեկույց համաձայնագրի՝ լիարժեք ու արդյունավետ գործողությունն ապահովելու ուղղությամբ ձեռնարկված միջոցների մասին,
- համաձայնագրի մեկնաբանման կամ կիրառման հետ կապված ցանկացած վեճ կարգավորելու նպատակով դիմել բանակցությունների կամ հաշտեցման գործընթացների:

4. Համաձայնագրով սահմանված են նաեւ համաձայնագիրը վավերացնելու, դրան միանալու, չեղյալ համարելու, վերանայելու կարգն ու պայմանները:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի 1-ին եւ 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. 1950 թվականի նոյեմբերի 22-ին Լեյք Սաքսեսում (Նյու Յորք) ստորագրված՝ կրթական, գիտական եւ մշակութային բնույթի նյութերի ներմուծման մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

8 հունիսի 2009 թվականի
ՍԴՈ-807